

4) des contaminations (gén. plur. *հարանց* sous l'influence de *արանց*), parfois récentes (*եպիսկոպոսունք* mot récemment emprunté mis en parallèle avec *երիցունք*);

5) enfin, inévitablement, une évolution naturelle de cours normal et probablement aussi des faits dialectaux.

(Fin)

FREDERIC FEYDIT

Professeur à l'Institut National
des Langues et Civilisations Orientales,
Membre de l'Académie de St. Lazare

ԶՈՒՂԱՅԵՑԻ ԽՕՋԱՅ ՍԱՖԱՐ ՈՒ ԽՕՋԱՅ ՆԱԶԱՐ ԵՒ ԻՐԵՆՑ ԳԵՐԴԱՍՏԱՆԸ

(Շար. տե'ս «Բազմավէպ» 1976, ք. 1-2, էջ 52-73)

ԽՕՋԱՅ ՍԱՐՖՐԱԶ

Խօջայ Նազարի երէց որդին էր որ իբր ՇԱՖՈՒԱԶ ալ յիշուած է: Իր ծննդեան թուականը մեզի անծանօթ կը մնայ: 55 տարեկան էր երբ մեռաւ ըստ իր տապանադրութեան, զոր իր կենտադրութեան վերջը պիտի տամ: Կը խորհիմ որ 1601էն առաջ ծնած չէր: Իր մեծ հօր Խօջայ Խաչիկի Յայսմաւուրքին մէջ չի յիշուիր, թէեւ հոն կը յիշուին իր հօրեղբօր՝ Խօջայ Սաֆարի՝ չորս որդիներն ալ: Այդ Յայսմաւուրքը որ գրուած է ՌԾԳ (1604)ին, Զուղայի բռնազաղթէն կարճ ժամանակ առաջ պէտք է գրուած ըլլայ, երբ դեռ ինքը երկու-երեք տարեկան էր եւ չէր յիշուեր իր մանուկ ըլլալուն պատճառով: Դաւրիժեցի առաջին անգամ կը յիշէ Խօջայ Սարֆրազը 1624ին՝ երբ կը վկայէ թէ «Խօջայ Նազարն գրեաց ի վերայ որդւոյ իւրոյ Խօջայ Սարֆրազին, որ յաւուրս յայնոսիկ էր յաջխարհն Ատրպա-տականի, մեծարել զվարդապետն Մովսէս (Տաթեւացին) յԱպա-հան»⁶⁸:

Ըստ Նոր Զուղայի հաւաքման թիւ 406 Յայսմաւուրքին, գրուած Սպահան 1627ին՝ Տէր Բարսեղէ, Խօջայ Գրիգորի համար, յիշատա-կարանին մէջ կը յիշուի վերջնոյս «... միւս դստերն՝ Աւդիտին, եւ կողակցին պարոն Սարֆրազին, և դստերն Խաթունջանին...»: Տարա-կողակցին պարոն Սարֆրազին փեսան էր Խօջայ Գրի-կոյս չկայ որ հոս յիշուած Խօջայ Սարֆրազն փեսան էր Խօջայ Գրի-գորի ամուսնացած ըլլալով անոր Աւդիտէ դստեր հետ, որ ինչպէս գորի ամուսնացած ըլլալով անոր Աւդիտէ դստեր հետ, որ ինչպէս պիտի տեսնենք այլուր կը յիշուի ուղիղ «Յուզիդէ» ձեւով, եւ այս ամուսնութենէն ունեցեր են աղջիկ մը՝ «Խաթունջան» որ Խօջայ Սար-ֆրազի մօրը անունն ալ էր⁶⁹:

68. ԴԱԻՐԻԺԵՑԻ, էջ 297:

69. 1972ին Նոր Զուղայի գերեզմանատունը գտայ Խօջաներ Սաֆարի եւ Նազարի բաժնին մէջ ու տապանաքարը. «Այս է տապան եւ բնակարան Խաթուն Մամին կողակց Սարֆրազին թվին ՈՂԲ (1643) ամին գ(րիստո)ս ա(ստուա)ծ իւրն

Մասիիւն, եւ Զըլիխան, եւ Սամարքուն, եւ սոցին սպասաւոր Տատկուն. յիշեցէք եւ աստուած ողորմի ասացէք»:

Հոս որոշ կը վկայուի որ Խոջայ Հայդադ երկիցս ամուսնացած էր Նանաջան եւ Սափուռ անուամբ կիներուն հետ:

Այսքան է ինչ որ ծանօթ է ինծի Խոջայ Հայդադի մասին:

ՎԱԹԱՆ (Ա)

Խոջայ Նադարի եւ իր կողակից Խաթուն Ջանի կրտսերադուստրն որդին էր Վաթան, զոր զանազանելու համար՝ իր հօրեղբոր որդի Վաթանէն կը կոչենք Վաթան Ա.: Իր մասին դժբախտաբար ծանօթութիւն կը պակսի: Զենք դիտելով թէ ամուսնացած էր թէ ոչ. մահուան թուականն ալ անծանօթ կը մնայ: 1972ին Նոր Զուղայի գերեզմանատունը չգտայ իր տապանաքարը:

Բացի ընտանեկան ձեռագրական յիշատակարաններուն մէջ ուրիշներու կարգին յիշուելէն՝ իր մասին միակ ծանօթ յիշատակութիւնը զոր կը գտնեմ՝ հոլանտացի ուղեգիր Ատամ Օլարիուսի վերոյիշեալ վկայութիւնն է:

Այդ վկայութեան համաձայն, Վաթան՝ որ 1637ի Սեպտեմբերին, արդէն կրնար տուի մը ատրճանակներ նուէր ստանալ եւ մասնակցիլ իր եղբայրներուն հետ խնջոյքներու եւ հիւրընկալութեանց, ուրեմն պէտք է խորհիլ թէ դոնէ քսան տարեկան մը ըլլալու էր: Կրնար նաեւ նոյն տարուան Հոկտեմբեր 22ին նահատակուած զուլիցերացի Եան Ռոտուֆ Սդատլըրի թաղման մասնակցած ըլլալ իր Սարֆրադ եւ իշխադ եղբայրներուն հետ:

Այսքան միայն ծանօթ է ինծի Վաթանի մասին: Զինքը պէտք է չփոթել Խոջայ Սարֆրադի որդի Վաթանի հետ, զոր կը կոչեմ Վաթան Բ.:

ՎԱԹԱՆ (Բ)

Խոջայ Սարֆրադի եւ Յուլիդէի երէց որդին էր Վաթան, որ կը յիշուի իմ հաւաքածոյիս հատուկտոր Յայսմաւուրֆին մէջ վեց եօթը անգամ սապէս. «Ստացողի գրոցս՝ Խաւջայ Սարֆրադին, եւ կողակցին իւրոյ (Յուլիդէին) եւ որդոցն. պարոն Վաթանին, Մէլիք աղային, Խաչիկին, Շահնազարին, զստերն Մարիամին, համեստ Մամին»: Ամուսնացած էր եւ ունեցաւ հինգ որդի՝ Սաֆրադ, Նազար, Աղազար, Գրիգոր, Մարիամ:

Ինք մեկենասած է Հարդֆրտի Աստուածաբանական ճեմարանին հաւաքման թիւ 5 Յայսմաւուրքը գրուած «ի Շաւշ քաղաքն, Ասպահան, ընդ հովանեաւ սուրբ Յովանիսի, որ աստ կան բազում նըշխարք սրբոց, ձեռամբ անարժան եւ անպիտան հող եւ մոխիր Ըստե-

փանոս երկից» ՌՃԸ (1659)ին: Կը յիշուի «ստացողի տառիս, Պարոն Խաւջայ Վաթանին, եւ կողակցին իւրոյ Թանկիսթունին, եւ որդոցն՝ Գրիգորին, Սաֆրադին, Նազարին, Ղազարին, եւ զստեր...»:

Իմ հաւաքմանս թ. 140 Յայսմաւուրֆին մէջ ալ, որ ինչպէս ըսի մաս մըն է Հարֆրտի Յայսմաւուրֆէն, էջ 3ք, 8ք, 12, 17ք կըրկնուած է. «ստացողի գրոցս Պարոն Վաթանին եւ կողակցին իւրոյ, եւ որդոցն՝ Գրիգորին, Նազարին, զստերացն Մարիամին», իսկ լուսանցքին աւելցուած «Աղազարին»:

1972ին Նոր Զուղայի գերեզմանատունը գտայ նաեւ Վաթան Բ.ի տապանադրութիւնը, ուր գերեզմանին վրան եւ չուրջը գրուած էր. «ՎԱԹԱՆ»:

«Եղեալ կա մէջ այս տապանի:
Մարմինըն Խ(օ)ջայ Վաթանի
Ա(ստուա)ծասէր խոնարհ հողի
Ինքն հնազանդ էր օրինի
Սա պատվական խիստ գովելի
Անո(ւ)ն բերան ամէն ազգի
Սա էր ամացդ ...անի
Զէր ժամանակ օր վախճանի
Յորժամ մարդո թիւն լցվի
Ի ապրելոյ ճար չունի սորա ունէր...
Եւ սա է սերտ հաւատովն ք(րիստոս)ի
Առատատուրս եւ աղքատի:
Ասեմ սորա տոհմ սեռի
Որդի էր Խ(օ)ջայ Սարֆրադի
Որ սըընթած իշխան բարի
Որ հնարի սէր թագաւորի
Թաքս պարծանք Հա(յ)ոց ...նիարի.
Սեղան պայծառ եւ գովելի.
Դարպասներն ոսկով ի լի.
Կարք համրանք անթվելի»:

Դժբախտաբար թուական կը պակսի:

ՄԵԼԻՔ ԱՂԱ

Խոջայ Սարֆրադի եւ Յուլիդէի երկրորդ որդին էր Մէլիք Աղա՝ որ կը յիշուի Վաթան (Բ.)ի եւ եղբայրներուն եւ քոյրերուն հետ իմ որ կը յիշուի Վաթան (Բ.)ի մէջ: Նոր Զուղայի վանքին դիւանին հատուկտոր Յայսմաւուրֆին մէջ: Նոր Զուղայի վանքին գերեզմանատունը գտայ տապանադրութիւն մը: Ամուսնացած էր եւ չորս զուտորներ ունեցաւ:

տարակուլեան ատեն՝ սխալ ընթերցում մը ըլլայ, եւ ուղիղը պէտք է ըլլայ խաչում:

Ըսինք որ «Աղէ» (Աղա) կոչում մըն է՝ որով ծանօթ էր Աղա խաչիկ: Ասկէ զատ ան կոչումած է նաեւ Պղտիկ Աղա: 1667 թուակիր ընծայագրին մէջ ան կը գրէ. «Արդ ես Աղա խաչիկս որ հռչակեալ Պղտիկ աղաս եմ»: Եւ դարձեալ «Ես Մէլիք Աղէ որդի Աղա խաչիկս որ մանշուր (հռչակաւոր) Պղտիկ աղայս անորդի իմ յօժարութեամբն Վերոյգրեալ հինգ (ձեռագիր) գրեանքն վախմ (վագֆ, կտակ) եւ յիշատակ արարի Սբ. Ամենափրկչի վանացն մօհրեցի (կնքեցի) Վկայութեամբ»: Արդարեւ ունի կնիք «ԱՂԱ ԽԱՉԻԿ»: Նուիրեալ հինգ ձեռագիրներն էին կոստղեալ Աստուածաշունչ մը, Հարցմունք (Տաթեակցի), Դատաստանագիրք, Միխայէլ Ասորիի Ժամանակագրութիւն եւ միատեղ կազմուած բառարան-պատմագիրք մը: Հոս ալ Աղա խաչիկ «անորդի» ըլլալը կը յիշէ:

Աղա խաչիկին մահուան թուականը այսպէսով աւելի կ'ամփոփուի, ընդմէջ 1667ին, երբ ընծայագրերը կը գրէր եւ կը ստորագրէր, եւ 1683ին՝ երբ իր կինը Սապրիխան կը յիշատակագրէր Անտոնեանց նախկին թիւ 17 Աւետարանին մէջ:

ՄԻՆԱՆ

Աղա խաչիկի եղբայրն էր Սինան՝ որ Անտոնեանց նախկին թիւ 17 Աւետարանին մէջ կը յիշուի «կողակցին իւրոյ Մարիամին» հետ, ինչպէս նաեւ «որդւոցն սոցա Մէլիքին, Պետրոսին» հետ:

1667ի ընծայագրին մէջ, սակայն, չեն յիշուիր Մէլիքն ու Պետրոսը եւ անոնց տեղ ունինք «Ես Սինանի կողակցի Մարիամ. ես Սինանի դուստր Սօլթանփաշէ. եւ ես Սինանի որդի Իսրայէլս»⁸⁹: Կարելի է ենթադրել որ Մէլիք եւ Պետրոս արդէն մեռած էին 1667ին եւ անոնց տեղ կային Իսրայէլ եւ Սօլթանփաշէ:

ԲԱՂՈՒՄ

Նախկին հաւաքման թիւ 17 Աւետարանը (1645էն) կը յիշէ «Բաղումի որդի՝ Թեւումին եւ դուստր Նաչխունին» մասին: «Բաղումի դուստր Նաչխունս» կը յիշուի 1667ի ընծայագրին մէջ ալ:

89. 1972ին Նոր Զուղայի գերեզմանատունը գտայ գերեզման մը՝ հետեւեալ կարճ տապանագրութեամբ. «Այս է տ(ա)պան Իսր(ա)էլին թվին ՌձԻԶ (1677)»: Անտարակոյս իրը ըլլալու է: Հոն գտայ նաեւ՝ «Այս է տ(ա)պան Մարիամին թվ(ին) ՌձԻԷ (1678)»: Ասիկա ալ կրնայ իր մայրը, այսինքն Սինանի կինը ըլլալ կամ թէ Խօջայ Վաթան երկրորդի (որդի Խօջայ Սարֆրազի) աղջիկը:

ՄԻՔԱՅԷԼ, ՄԷԼԻՔՆԻԱԶ, ՍՕԼԹԱՆՓԱՇԷ

Ասոնք որդիներ եւ դուստր են Աղա խաչիկի (Պղտիկ Աղա), որոնց մասին յաւելուածական տեղեկութիւններ չունիմ: Ընծայագրին մէջ «երկու Մէլիքնիազին» գրուած է 1667ին: Դժբախտաբար կարելի չէ ստուգել թէ իրապէս երկու Մէլիքնիազ գոյութիւն ունեցած են թէ ո'չ: Սակայն ունինք տապանաքար մը, որ 1972ին Նոր Զուղայի գերեզմանատունը գտայ, սա արձանագրութեամբ. «ՏԱՊԱՆՆՍ - ՄԷԼԻՔ ՆԻ - ԱԶԻՆ Է - Թ(վին) Ռ.Հ.Ա.» Հայոց 1071 եւ Քրիստոսի 1622:

(Շար. 3)

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ